նըւում էին անգլիական զօրեղ ազդեցութեան տակ։ Միւս կողմից՝ յայտնի են փաստեր, որ հնդկահայ հարուստ առեւտրականները իրենց ընտանիքում պահում էին անգլիացի ուսուցիչներ՝ իրենց զաւակների կրթութեան եւ դաստիարակութեան համար։

Սակայն իր գրուածքների լեզուից ու գրութեան ձեւերից, ինչպէս նաեւ մտքերի տրամաբանական կապակցութիւնից եւ զարգացումից պարզ երեւում է, որ Յակոբ Շահամիրեանի կրթութիւնը, մինչեւ իսկ — այսպէս ասած — հայագիտութեան մէջ, շատ հեռու է հիմնաւոր լինելուց։ Հիմնաւոր չէր նաեւ նրա ընդհանուր կրթութիւնը, որովհետեւ քիչ-շատ կանոնաւոր կրթութիւն ունեցող մարդը չէր կարող այնպէս անդրադէտ գրել, ինչպէս գրում է Յ. Շահամիրեանը։ Ո՛չ միայն լեզուն, ուղղագրութիւնը, այլ եւ ամբողջ գրութիւնը մի անհերքելի ապացոյց է առ այն, որ նա չէր կարող կրթուած եւ որոշ լուրջ պատրաստութեան տէր մի մարդ լինել — «կրթուած» բառի ներկայ իմաստով։

Բայց եթէ նա դարձել է աչքի ընկնող մի դէմք մասնաւորապէս մեր քաղաքական շարժման պատմութեան մէջ եւ միեւնոյն ժամանակ նաեւ մի նշանաւոր քաղաքական-գրական գործիչ, դա պէտք է վերագրել ոչ թէ նրա ստացական կրթութեանը, այլ ամենից առաջ՝ իր բնածին խելքին եւ ընդունակութիւններին, ապա՝ իր միջավայրի բարերար ազդեցութեանը, կեանքին։

Այո՛, կեանքն է եղել նրա գլխաւոր ուսուցիչը, որը մի կողմից՝ ազդելով նրա տպաւորուող եւ ընդունակ հոգու վրայ, շատ բան է սովորեցրել նրան, իսկ միւս կողմից՝ հարկադրել եւ հնարաւորութիւն է տուել նրան՝ ինքնաշխատութեամբ իր կրթութեան բացը լրացնելու։ «Ես, փոքրիկն ի ձէնջ, ընթերցայ, լուայ եւ տեսի յոյժ» — գրում է նա (74)1)։

Շահամիրեանը ինքն էլ զգում է իր կրթութեան թերին, ուստի եւ բազմաթիւ անգամներ խնդրում, աղերսում է ընթերցողին՝ ներողամիտ լինել։ Հայոց պատմութիւնն անգամ, որ այդ ժամանակներում ամենակարեւոր ուսմունքն էր համարւում, նա հարկաւոր չափով չի սովորել. «Տխուր է իմ ձեզ ասել2), որ ես ոչ գտայ շնորհ կրթութեան ի հրահանգս դպրութեան եւ ոչ ժամանակ ընթեռնլոյ բուն պատմութիւն հայոց, այլ այնքան, որ ի մէջ պատմութեան այլ ազգաց լուայ եւ այնքան, որ բարեղոյն Մովսէս Խորենացին եթող յիշատակ իր» (22)։ Կամ մի այլ տեղում. «Տխուր է ինձ տեսանել տկարութիւն իմ, որ ոչ գիտեմ կատարելապէս ոչ բառ եւ ոչ բայ հայերէն լեզուիս եւ ոչ շնորհ արհեստին գրելոյ եւ խօսելոյ»։ Ու նորից հարիւր մէկերորդ անգամը խնդրում է ընթերցողին՝ «ներել իմոյ ռամկօրէն շարադրութեան» (111)։

«Որոգայթ Փառաց»-ից իմանում ենք, որ Շահամիրեանն ունեցել է բաւական մեծ ընտանիք — կին, մէկ տղայ եւ աղջիկներ (թիւն անյայտ)։ Ինքը մասամբ այդ հանգամանքով է բացատրում իր գրուածքների անկատարելութիւնը, որովհետեւ չունենալով «պաշտօն կան տարեկան ռոճիկ յումեքէ», հազիւ էր կարողանում իր ընտանիքի բարգաւան կարիքները հոգալուց յետոյ՝ բաւարար ժամանակ գտնել գրական աշխատանքների համար։

Այստեղից կարելի է եզրակացնել, որ նա հօրից բաժան էր եւ նրա հարստութիւնից չէր օգտւում. հակառակ դէպքում անհասկանալի կը լինէին նրա զանգատները կեանքի դժուարութիւններից։ Ինչպէս երեւում է՝ նա ապրում եւ իր ընտանիքը պահում էր տպարանի վաստակով, որ այն պայմաններում հազիւ թէ նախանձելի լինէր։

Նա եղել է — ինչպէս տեղեկանում ենք իր մի խոստովանութիւնից — սիրուած ու լաւ հայր իր ընտանիքի համար. «Իմ ամբողջ կեանքում ես մնացի մխիթարուած, առանց կասկածների եւ սիրելի իմ տանը»։ Ընտանիքն էլ, իր հերթին, ապրել է սիրով ու խաղաղ, մէկը

---

1) Փակագծի մէջ առած թուերը ցոյց են տալիս «Որոգայթ Փառաց»ի երեսները։

2) Բոլոր քաղուածքների մէջ սրբագրել ենք կէտադրութիւնը, որովհետեւ հեղինակը — կարելի է ասել — կէտադրութիւն չունի, եղածն էլ մեծ մասամբ անկանոն է ու սխալ։ Լեզուական սրբագրութիւն կատարել ենք մի քանի աննշան դէպքերում միայն, երբ դա անհրաժեշտ է եղել հեղինակի մտքերը պարզ անելու համար։